**ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 7-Ա**

**«17» սեպտեմբեր 2023թ.** **ք. Երևան**

***ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

Ուսումնասիրելով Երևանի ավագանու ընտրություններում թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում ձևավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին արձանագրված խախտում-ների վերաբերյալ գնահատականները՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1. Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումները.**

2023 թվականի սեպտեմբերի 17-ին տեղի են ունեցել Երևանի ավագանու ընտրություններ: Ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորվել է թվով 60 ընտրական տեղամաս, սահմանվել են թվով 1 տեղամասային կենտրոն և կազմավորվել թվով 60 տեղամասային ընտրական հանձնաժողով:

Թվով 60 տեղամասերից 38 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառումներ առկա չեն: Այդ տեղամասերն են՝ 7/01, 7/04, 7/06 7/09, 7/11, 7/12, 7/14, 7/15, 7/16, 7/17, 7/21, 7/22, 7/25, 7/26, 7/27, 7/28, 7/29, 7/32, 7/33, 7/34, 7/36, 7/37, 7/40, 7/43, 7/44, 7/46, 7/47, 7/49, 7/50, 7/51, 7/52, 7/53, 7/54, 7/55, 7/56, 7/57, 7/58, 7/60:

Թիվ ***7/02 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

1) «Ունեմ հատուկ կարծիք»:

Թիվ ***7/03 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

2) «Ունեմ հատուկ կարծիք»*:*

Թիվ ***7/05 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

3) «Քվեարկության ընթացքում հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի անդամ Նվարդ Ֆրանկյանը նկարել են ընտրության մատյանները, հանձնաժողովի նախագահի կողմից նկարված նկարները հեռախոսից ջնջվել են»*:*

4) «Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Մայր Հայաստան» կուսակցության կողմից ներկա վստահված անձ Գապոյան Քնարիկը սխալ ուղղորդում է կատարել քաղաքացուն, որի պատճառով քաղաքացին չի կարողացել կատարել իր ընտրությունը: Այնուհետև ընտրողը ներկայացել և ընտրել է»*:*

«Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ 7/05 ընտրատարածքում հանդիսանում եմ որպես վստահված անձ: Նշեմ, որ ինձ մոտեցավ Ռուսաստանի մի քաղաքացի և հարցրեց, «եթե չունեմ կացության քարտ, բայց իմ անունը նախկինից ցուցակում կա», ես նրան պատասխանել եմ, որ եթե չունես հաշվառում, կամ կացության քարտ, կարծում եմ՝ ոչ: Նա հեռացավ ընտրատարածքից, անցավ մոտ կես ժամ, հետո մոտեցավ ինձ նորից ու ասաց, որ իրեն ասել են կարող է ընտրություն կատարել, քանի որ հաշվառված է անձնագրային բաժնում, մոտեցան «Քաղաքացիական պամանագրի» վստահված անձիք և ասացին, թե դիտավորություն եմ ունեցել: Ես որևէ դիտավորություն չեմ ունեցել, քանի որ ես քաղաքացուն չեմ ճանաչում և չգիտեմ թե ում կողմնակիցն էր»:

Թիվ ***7/07 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումները՝

5) «Քաղաքացին ստացել է քվեաթերթիկները, մտնելով քվեախուց դուրս եկավ և հայտարարեց, որ 14 համարը չի ստացել»*:*

«Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ հանդիսանում եմ «Մայր Հայաստան» կուսակցության վստահված անձ: Նշեմ, որ նկատեցի, որ մի քաղաքացի ասաց, որ իրեն պակաս են քվեաթերթիկ տվել, մոտեցա հաշվեցինք, կինը ճիշտ էր, պակասում էր 14 համարի քվեաթերթիկը, այնուհետև ես պահանջեցի, որ արձանագրեն, թե ինչու է պակասում, նախագահ Հովհաննիսյան Արտակը պատռեց բոլոր քվեաթերթիկները, շպրտեց քվեախցիկի կողմ, ձեռքս քաշելով ասաց, որ չվերցնեմ, ինձ տալով մարմնական ցավ, որից հետո ես կրկին պնդեցի քաղաքացու ներկայությամբ, որ արձանագրի կատարվածը ամբողջությամբ արձանագրեն, քաղաքացին սպասեց, մինչև արձանագրեցինք և նա իր անուն ազգանունը գրեց և ավելացրեց իր ստորագրությունը, որից հետո բոլորին ամոթանք տվեց և հեռացավ: Նախագահ Արտակ Հովհաննիսյանին այդ ամենը դուր չգալով խնդրեց բոլորին հեռացնեն ինձ ընտրատարածքից: Խնդրում եմ Ձեզ տեսաձայնագրությունը հանել և իրականությունը Ձեզ պարզ կլինի»:

Թիվ ***7/08 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

6) «ՈՒԺը Հայրենյաց» ավագանու թեկնածու Մերի Մարկոսյանն այցելեց տեղամաս որպես դիտորդ գրանցվելու, վերջինիս հանձնաժողովի նախագահը չթողեց գրանցվի և դուրս հրավիրվեց տեղամասից: Ունեմ հատուկ կարծիք»*:*

Թիվ ***7/10 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

7) «Հատուկ կարծիք դրական»*:*

Թիվ ***7/13 փեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

8) «Դիտարկման ընթացքում անդամի կողմից մի քանի անգամ չի փակվել քվեատուփը»:

«4 քվե համարվել է անվավեր, դրոշմանիշը ծրարի վրա փակցնելու համար»:

«2 ծրար եղել է դատարկ, դրոշմանիշը փակցվել է ծրարի վրա»:

«Ամփոփումից հետո բերվել է 2 անձի կտրոն, արձանագրություններ դաշտում կտրոնի հետ միասին փակցվել, նշելով, որ հրաժարվել է մասնակցել ընտրությանը: Հանձնաժողովի նախագահը մեր արձանագրությունից հետո զանգահարեց անհայտ անձի՝ նշելով, որ զանգահարել է տեղամասի նախագահին, որից հետո արձանագրություններ բաժնից պատռել է կտրոնը և ծրարը»:

«Ծրարների բացելու ընթացքում հայտնաբերվել է 2 ծրար, որոնց վրա փակցված է եղել 2 դրոշմանիշ, իսկ մեջը քվեաթերթիկ չկա: Արդյունքում պարզվեց, որ որոնց ինքնությունը չենք հիշում և պահանջե են որպեսզի դրոշմանիշը անպայման փակցվի դատարկ ծրարի վրա: Հանձնաժողովի անդամին մերժելուց հետո տվյալ անձինք սկսել են գոռալ և կրկին անգամ պահանջել փակցնել դրոշմանիշը ծրարի վրա և գցել արկղի մեջ: Հանձնաժողովի անդամն էլ վախից կպցրել է և կատարել քաղաքացու պահանջը, և տվյալ պահին չտեղեկացնելով հանձնաժողովի նախագահին և քարտուղարին, որպեսզի գրանցամատյանում արձանագրվեն: Տվյալ 2 դրոշմանիշը համարվում է չօգտագործված»:

Թիվ ***7/18 փեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

9) «Խախտում չկար»*:*

Թիվ ***7/19 փեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

10) «Հատուկ կարծիք»*:*

Թիվ ***7/20 փեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

11) «16:30 տվյալներով 7/20 տեղամաս են ներկայացել ԿԸՀ-ի տրամադրած վկայականի սխալ անձնական տվյալներով՝ Հարություն Լևոնի Նիկողոսյան, որից հետո 18:25 ներկայացրել են ԿԸՀ-ի նոր վկայական ճշտված անձնական տվյալներով, հետին ամսաթվով՝ 15. 09. 2023թ. , որը գրված էր նաև նախկին վկայականում: Պատճառը հետին ամսաթվով ԿԸՀ-ի վկայականն է, որը չի ընդունվել 7/20 տեղամասի նախագահի և քարտուղարի կողմից, որը չի ընդունվել Հանրապետություն կուսակցության վստահված անձի կողմից»:

Թիվ ***7/23 փեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

12) «Հանձնաժողովի անդամի կողմից փակցնելու ժամանակ երկու դրոշմանիշ միաժամանակ կպել է ծրարին և քվեաթերթիկին: Մեկ դրոշմանիշ խոտանվել է»:

Թիվ ***7/24 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

13) «Թիվ 1 մատյանում ընտրողը սխալմամբ ստորագրել է այլ անձի փոխարեն, հանձնաժողովը ձեռնարկել է համապատասխան քայլեր»*:*

Թիվ ***7/30 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

14) «Ընտրողը ցուցակ 2 ստորագրել է, մոտեցել քվեաթերթիկ 2, ստացել 14 քվեաթերթիկ և ծրարը, և առանց քվեախցիկ մտնելու պատռեց և կտրոնի հետ միասին թափեց աղբամանը»*:*

Թիվ ***7/31 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

15) «Քաղաքացին ստացել է կտրոն, ստորագրել է, մոտեցել քվեախցին, ծրարը և քվեաթերթիկը բոլորը պատռել է, ինչպես նաև կտրոնը»*:*

Թիվ ***7/35 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

16) «Ընտրատեղամաս այցելել է խուլ և համր ընտրող, ով գրանցված է եղել ընտրատեղամասում, քվեատուփից դուրս գալուց հետո ծրարի մեջ չի նկատվել քվեաթերթիկ և դրոշմանիշի ծրարը գցել տուփի մեջ, բայց ընտրողը պնդել է, որ ուզում է ծրարը գցել տուփի մեջ: Ծրարը առանց քվեաթերթիկի գցել է քվեատուփի մեջ, հանձնաժողովի նախագահը տեղեկացրել է ընտրատարածքային տեղամաս, խնդրին տրվել է հետևյալ լուծումը, հաշվարկի ժամանակ կտրոններից մեկի վրա նշվել է, որ ընտրողը հրաժարվել է քվեարկել: Նույնը նշվել է ընտրողների ցուցակում, արձանագրության մեջ և մատյանում»:

Թիվ ***7/38 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

17) «12:05-ին քվեախցիկում գտնվել է 2 անձ: Խախտվել է քվեարկության գաղտնիությունը»*:*

Թիվ ***7/39 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

18) «7/39 տեղամասի աշխատանքին մասնակցել եմ 19:00-ից: Մասնակցությունը շատ ցածր էր, որը նշանակում է քաղաքացու կամքի արտահայտման բոյկոտ: 2 համարը դուրս էր գալիս իրար հետևից: Վերահաշվարկի վերջնական որոշում չունեմ»*:*

Թիվ ***7/41 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

19) «Ունեմ հատուկ կարծիք»*:*

Թիվ ***7/42 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

20) «Ձայների հաշվարկից հետո 22:10-ից սկսած «Հանրապետություն կուսակցությունը» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձինք 7/41 տեղամասից գալիս են 7/42, նայում տվյալներն և վերադառնում: Տվյալ

ժամանակ 7/42 տեղամասում գտնվում էր 2 վստահված անձ՝ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունից: Հանձնաժողովի նախագահի զգուշացումներից հետո վստահված անձինք լքեցին 7/42 տեղամասը»:

Թիվ ***7/45 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

21) «Ունեմ հատուկ կարծիք»:

Թիվ ***7/48 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

22) «Ունեմ հատուկ կարծիք ցուցակի հետ կապված»:

Թիվ ***7/59 տեղամասում*** տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա է հետևյալ գրառումը՝

23) «Հատուկ կարծիք»:

**2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի եզրակացությունները**

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

1) Սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-16-րդ, 18-23-րդ ենթակետերում նշված գրառումներում ներկայացվում են հանգամանքներ, որոնք կամ չեն հանդիսանում քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարված Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, կամ ներկայացվում են հնարավոր խախտման կանխարգելման կամ տարաբնույթ իրավիճակների շտկման մասին արձանագրումներ կամ պարզապես արձանագրում են որոշակի իրողություններ: Վերը նշված գրառումներում ներկայացված չեն հանգամանքներ, որոնք կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

2) Սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված գրառմամբ ներկայացվում են ընտրողին քվեաթերթիկների ամբողջական փաթեթ չտրամադրելու վերաբերյալ հանգամանքներ: Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ «Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողին տրամադրում է ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար: Ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկներն ստանալուց:»:

Գրառմամբ ներկայացված հանգամանքների պարզաբանման նպատակով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պահանջել և ստացել է թիվ 7/07 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արտակ Հովհաննիսյանի և թիվ 7/07 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Անի Գրիգորյանի բացատրությունները, ով քվեաթերթիկ և ծրար հատկացնելու գործառույթ է

իրականացրել գրառմամբ ներկայացված իրավիճակի ժամանակ: Վարչական վարույթի շրջանակներում թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզել է, որ քաղաքացու պնդմամբ քվեարկության ժամանակ իրեն տրամադրել են թվով 13 (տասներեք) քվեաթերթիկ՝ 14-ի (տասնչորս) փոխարեն, որից հետո հանձնաժողովի նախագահը տրամադրել է նոր քվեաթերթիկներ, որպեսզի քաղաքացին հնարավորություն ունենա իրացնելու իր քվեարկության մասնակցելու իրավունքը: Քվեաթերթիկներից պակասում էր 14-րդ (տասնչորսերորդ) քվեաթերթիկը, որի վերաբերյալ այդ պահին քվեաթերթիկ և ծրար հատկացնելու համար պատասխանատու հանձնաժողովի անդամ Անի Գրիգորյանը, ով 20.09.2023թ. բացատրագիր է ներկայացրել առ այն, որ «Հստակ հիշում եմ, որ տրամադրել եմ 14 քվեաթերթիկ, քանի որ հետհաշվարկի հերթականությամբ էի տրամադրում, ուստի չէի կարող չտրամադրել, բացի այդ հնարավոր է, որ նա միտումնավոր է թողնել քվեախցիկում, քանի որ մի քանի վայրկյան գտնվել է քվեախցիկում: Քաղաքացուն տրամադրվել է նոր քվեաթերթիկներ, վերջինս իրականացրել է իր ընտրությունը: Խոսքերիս իրավացիությունը հստակեցնելու համար առաջարկում եմ վերծանել տեսագրությունները»: Բացատրագիր է ներկայացրել նաև թիվ 7/07 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արտակ Հովհաննիսյանը առ այն, որ «Ձեռքից վերցրել եմ քվեաթերթիկները, տրամադրել եմ նորը, կատարվածը համարում եմ սադրանք, քանի որ բացի քվեաթերթիկ տրամադրող հանձնաժողովի անդամից, ևս մեկ հանձնաժողովի անդամ, ով իր հանգստի ժամանակ նստած է եղել Անի Գրիգորյանի կողքը, հաստատում է, որ քաղաքացուն տրամադրվել է բոլոր քվեաթերթիկները: Քաղաքացին ուղղորդված է եղել, միտումնավոր քվեաթերթիկը թողել է քվեախցում»: Բացատրագիր է ներկայացրել նաև թիվ 7/07 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Կարինե Կարապետյանը առ այն, որ «Իմ ազատ ժամին նստած եմ եղել Անի Գրիգորյանի կողքը, նա քվեաթերթիկները վերջից էր հաշվում ու կիսաձայն, այնպես, որ լսելի էր կողքից: Վստահ եմ, որ քաղաքացին միտումնավոր է արել՝ սադրանքի համար»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված հանգամանքներում խախտում առկա չէ, նշված դեպքը եզակի է և չէր կարող ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

3) Սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում նշված գրառմամբ ներկայացվում են տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում արձանագրված հնարավոր խախտումներին առնչվող հանգամանքներ: Հաշվի առնելով, որ գրառմամբ ներկայացված հանգամանքների ազդեցությունը քվեարկության արդյուքների վրա գնահատելու համար անհրաժեշտ է պարզել գրառմամբ ներկայացված հանգամանքները, թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշել է թիվ 7/13 տեղամասում քվեարկության արդյունքները սեփական նախաձեռնությամբ վերահաշվարկել: Վերահաշվարկի արդյունքում

ելակետային տվյալներ չեն փոփոխվել, փոփոխության են ենթարկվել անվավեր թվեաթերթիկների թիվը՝ 7-ից դառնալով 0, քանի որ անվավեր ճանաչված քվեաթերթիկները համարվել են չսահմանված նմուշի, քանի որ քվեաթերթիկների վրա առկա չէր տվյալ տեղամասի ինքնասոսնձվող դրոշմանիշները, այլ ինքնասոսնձվող դրոշմանիշները փակցվել են քվեարկության ծրարի վրա:

Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ «Քվեարկելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է քվեատուփի մոտ ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին և նրան է հանձնում քվեարկության կտրոնը: Հանձնաժողովի անդամն ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը: Հանձնաժողովի անդամն առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոսնձվող դրոշմանիշը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:»:

Վարչական վարույթի շրջանակներում թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարզել է, որ դրոշմանիշն Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված կարգի խախտմամբ փակցրել է այդ պահին քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանը, ով 20.09.2023թ. բացատրագիր է ներկայացրել առ այն, որ «սկզբից տեղի է ունեցել շփոթմունք ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցրել եմ ծրարի վրա: Շուտ զգալով իմ սխալը շտկել եմ»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանը խախտել է Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված՝ քվեարկության ծրարի կտրվածքի միջով ինքնասոսնձվող դրոշմանիշը քվեաթերթիկին փակցնելու կարգը, հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21–րդ կետով՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն անհրաժեշտ է համարում միջնորդություն ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով:

4) Սույն որոշման 1-ին կետի 17-րդ ենթակետում նշված գրառմամբ ներկայացվում են քվեարկության գաղտնիության խախտմանն առնչվող հանգամանքներ: Սույն վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցների գնահատմամբ՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ տեսանկարահանման նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թիվ 7/38 ընտրական տեղամասում ժամը 12:03-ից 12:04-ն ընկած ժամանակահատվածում քվեախցիկներում նկատվում է երկու անձանց ներկայություն:

Հաշվի առնելով, որ ներկայացված հանգամանքներում, հնարավոր է, առկա են քրեաիրավական բնույթի հատկանիշներ, թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն որոշման 1-ին կետի 17-րդ ենթակետում նշված գրառմամբ ներկայացված հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները պետք է ներկայացվեն իրավապահ մարմիններին: Միաժամանակ, թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացված դեպքը եզակի է և չէր կարող ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 17.09.2023թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

2. Միջնորդել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել թիվ 7/13 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Հերմինե Մարգարյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

**Թիվ 7 ընտրատարածքային ընտրական**
**հանձնաժողովի նախագահ՝** **Ա. Սաֆարյան**